Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԳՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 5. Գեղարքունիք - ցերեկային կենտրոն (Ճամբարակ, Սևան) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2025 -31.03.2025թթ. |
| Ներկայացման օր | 03.04.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 43 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 3 դեպքի վարում (ֆինանսական աջակցության տրամադրման կազմակերպում, ցերեկային կենտրոնի ծառայություններից օգտվելու համար ուղեգրի ձեռքբերման կազմակերպում) և թվով 7 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Հոգեբանական աջակցության շրջանակներում հոգեբանի կողմից հաշվետու ժամանակահատվածում 21 շահառուի տրամադրվել է անհատական խորհրդատվություն:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի** կազմակերպման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 4 խմբակ՝ երգ-երաժշտություն, գրական, տեղեկատվական, ձեռագործություն և ջուղագործություն, որոնց մասնակցել է թվով 32 շահառու:
  Կազմակերպվել է թվով 8 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 43 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ Սուրբ Ծնունդ, Հայոց բանակի օր, Տյառնընդառաջ, Հայրենիքի պաշտպանի օր, Կանանց միջազգային օր, Մայրենի լեզվի պահպանման ու կարևորման օր, Միջինքի օրվա արարողակարգ և շահառուի ծննդյան օրվա նշում:
- **Աշխատանքային/արտթերապիայի տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է թվով 3 հանդիպում՝ ուղղված խմբային աշխատանքում ինտեգրմանը, հուզական կայունության հաստատմանը, որին մասնակցել է 32 շահառու:
- **Կենտրոնում սննդի տրամադրման** շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 1 շահառու օգտվել է լվացքի ծառայության տրամադրումից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Սիրո թեմայով քննարկումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surli.cc/ptheew),
- Տյառնընդառաջին նվիրված միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/nlqrrr),
- Կանանց միջազգային օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/glgrmc),
- Մայրենի լեզվի պահպանման ու կարևորման օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/GdGuZ):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնական գրասենյակի կողմից ամբողջ անձնակազմի համար կազմակերպվել է «Առաքելություն Հայաստան ԲՀԿ վարքականոնները և պաշտպանության քաղաքականությունը» թեմայով դասընթաց:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 43/42 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 28 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 9 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 8 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 33 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 42 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 32 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 32 |
| 5.1 | երգ-երաժշտություն | 16 |
| 5.2 | գրական | 28 |
| 5.3 | ձեռագործության և շյուղագործության | 12 |
| 5.4 | տեղեկատվական | 8 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 43 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | - |
| 7. | Այլ ծառայություն (նշել)<br>Անհատական հոգեբանական խորհրդատվություն<br>Լվացքի ծառայություն | <br>21<br>1 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Միխիթարյան* «03» 04. 2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)